ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Աղվան Հարությունյանը, Գարիկ Մկրտչյանը, Գոռ Մկրտչյանը, Արսեն Սիմոնյանը

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին</u>
Մանուկ Հովհաննիսյան, Արման Միքայելյան, Սիլվա Գրիգորյան

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հունան Ռուբենյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարոզ Սարիբեկյանը</u>

Լսեցին
***ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 12 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ակունք համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 12 հերթական նիստի օրակարգը

1. Ակունք համայնքի 2021թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը սահմանելու մասին
2.Ակունք համայնքի կողմից 2021 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների տեսակները ու դրույքաչափերը սահմանելու մասին
3.Ակունք համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին
4.Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի 2021 թվականի կառուցվածքը,աշխատողների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
5.«Ակունք համայնքի մանկապարտեզ»համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2021թվականի աշխատողների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
6.Համայնքային սեփականություն ճանաչելու մասին
7. Հողամասերի օտարման մասին
8.Հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին
9.Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԱՐՈՋ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/***

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին»օրենքի 9-րդ,10-րդ,12-րդ և 14-րդ հոդվածների,«Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի18-րդ հոդվածի1-ին մասի 18-րդ կետի ,համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել՝Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2021թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը համաձայն 1-4 հավելվածների:
2.Սույն որոշման հավելված 1-ի.
1)1-ին կետով նախատեսված դրույքաչափերի նկատմամբ Ակունք համայնքի Կապուտան,Հատիս,Զովաշեն,Զառ և Սևաբերդ բնակավայրերի համար կիրառել 0.5 գործակից,
2) 4-րդ կետով նախատեսված դրույքաչափի նկատմամբ կիրառել 0.5 գործակից
3)5-րդ,7րդ կետերով,10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դրույքաչափերի նկատմամբ նկատմամբ կիրառել 0.3 գործակից,

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021թվականի հունվարի 1-ից :

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55-Ն/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆՈՒՇ ԳԱՐՍԵՎԱՆՅԱՆ/***

Համաձայն«Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի,համայնքի ավագանին որոշում է՝

տեսակներն ու դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021թվականի հունվարի 1-ից :

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56-Ն/

Լսեցին
***ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՍԻԼՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի,Ակունք համայնքի ավագանին որոշում է '

1.Հաստատել Ակունքի համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը համաձայն հավելվածի :

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ,ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ***

***/Զեկ. ՄԱՐՈՋ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի,համայնքի ավագանին որոշում է '

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի Մարզի Ակունքի համայնքապետարանի 2021թվականի աշխատակազմի կառուցվածքը,աշխատողների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 1-2-ի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից :

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58-Ա/

Լսեցին

***«ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28 -րդ կետի,Ակունք համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել՝«Ակունք համայնքի մանկապարտեզ»համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2021թվականի աշխատողների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021թվականի հունվարի 1-ից :

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59-Ա/

Լսեցին

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՍԱՇԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010թվականի հունիսի 1-ի թիվ 186 -Ն հրամանը,համայնքի ավագանին որոշում է՝

1.Գյուղատնտեսական նշանակության հողամասերը ճանաչել Ակունք համայնքի սեփականություն համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60/

Լսեցին

***ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ***

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ,71-րդ, 67-րդ և76-րդ հոդվածների,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետի,համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմային համապատասխան՝ համայնքի ավագանին որոշում է՝

1. Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը օտարել.
   1)աճուրդ–վաճառքի միջոցով և հաստատել մեկնարկային գներ՝ համաձայն հավելված 1-ի,
   2)ուղղակի վաճառքով,ընդլայնման նպատակով և հաստատել ուղղակի վաճառքի գին համաձայն հավելված 2-ի,
   3) սեփականության իրավունքի օտարումը փոխանակության միջոցով համաձայն հավելված 3-ի :

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61/

Լսեցին
***ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՍԱՇԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Համաձայն հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի,«Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի,հիմք ընդունելովՀայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված«Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի»2020 թվականի դրական եզրակացությունները,Կապուտան բնակավայրի գլխավոր հատատակագիծը, հողերի սեփականատերերի կողմից ներկայացված հայտերը,համայնքի ավագանին որոշում է `

1.Փոխել հողամասերի նպատակային նշանակությունը համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62/

Լսեցին
***ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՍԱՇԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Համաձայն Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի,«Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի,«Նորմատիվ իրավական ակտերի մասին»օրենքի33-րդ հոդվածի,համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմային համապատասխան,Ակունք համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել Ակունք  համայնքի ղեկավարին համայնքի սեփականություն հանդիսացող հատուկ պահպանվող տարածքների,պատմության և մշակութային գործառնական նշանակության ծածկագիր 07-009-0173-0004,200քմ հողամասը տրամադրել  մրցույթով 10 տարի ժամկետով կառուցապատման իրավունքով և վճարի մեկնարկային չափ սահմանել ամսական 60 000դրամ:

2.Ուժը կորցարծ ճանաչել համայքի ավագանու 2013թվականի մարտի 13-ի«Ակունքի համայնքային սեփականություն համարվող հողերը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին»թիվ12 որոշումը:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63/

Ավագանու անդամներ

ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԵԽԱԿ ՄԵԽԱԿՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ԷԴԻԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ ______________

Նիստն արձանագրեց` Մարոզ Սարիբեկյանը

______________